առեղծուածային գոյութեան ամենահաստատուն պատուանդանն է:

Արդարեւ՝ որքան եւ արժէքաւոր լինին արտասահմանեան աշխատաւորութեան գործօն համակրանքները, որքան եւ առատ լինին Գ. Ինտերնացիոնալի գաղտնի ֆոնդերը բուրժուական հասարակակարգի դէմ բուռն պրոպագանդ վարելու համար, որքան եւ ճարպիկ լինին սոցիալական դիկտատորները իրենց նենգ ու դաւադիր գործելակերպի մէջ, այնուամենայնիւ այդ բոլորը միասին ոչինչ արժէն ռուս ազգի հոգեբանական ֆակտորի համեմատութեամբ: Առանց այդ ներքին կարելիութեան ու յենարանին, բոլշեւիզմը ոչ թէ տասն տարի, այլ տասն օր իսկ դիմանալ չէր կարող:

Տասն տարին այս հակամարդկային ու հակաքաղաքակրթական բեժիմի՝ դէշ ու վհատեցուցիչ վկայական է որեւէ ժողովրդի համար: Մենք տեսանք, որ եւրոպական ոչ մի երկիր հանդուրժեց Լենինեան աւետարանը անգամ մի տարի: Այս ապշեցուցիչ փաստը ռուսական հոգեբանութեան մի յուսաբեկիչ արտայայտութիւնն է:

Շատ բարդ է ռուս մարդու ներքինը եւ յաճախ աշխարհին շատ անծանօթ մնացած: Եւրոպայի կէսի վրան թառած սլաւոնական այդ վիթխարին մի առեղծուածային գոյութիւն է շատ եւրոպացիների համար: Եւրոպայում յաճախ սլաւոնական շաղակրատանքի նիւթ են միայն ռուս կեանքն ու իր առանձնայատկութիւնները. եւ որչափ անեկդոտներ կամ գրեթէ վայրենի կարծիքներ տիկիններին զուարճացնելու համար: Ռուսիային նուիրուած շատ հատորներ եմ աչքի անցրել տարիներից ի վեր, եւ միշտ էլ ապշել եմ հեղինակների տգիտութեան առթիւ, թէ թեթեւամտութեան վրայ: Անգամ մեր օրերում, Ռուսիոյ այս աննախընթաց տագնապի շրջանում, տակաւին օտար ճամբորդների ծանօթութիւնն աւելի հեռու չի գընում, քան վաղուց հետէ ճանճրալի դարձած «կնուտ», «մուժիկ», «կօզակ» բառերը եւ մանաւանդ շարչրկուած «նիչեվօն»: Մինչդեռ լուրջ, խղճմտամտ ուսումնասիրութիւնը ռուսական աշխարհի եւ խառնուածքի, հաւանարար հեշտութեամբ պիտի վեր հանէր ու բացատրէր բոլշեւիզմի տիրապետութեան պատճառները ու նրա շատ առանձնայատուկ կողմերը:

Ռուս ժողովուրդի ամբողջ բարոյական կազմուածքը կրում է ստեպների հոգեբանութեան խորը կնիքը: Ռուս հոգին ինքն էլ մի լայնատարած ու երազուն ստեպ է, ուր բնութիւնը լեռ չունի եւ մարդը՝ կամք:

Պարադոքս չէ, այլ պատկերաւոր ճըշմարտութիւն, որ փռուած է ռուս ճոխ եւ օրիգինալ գրականութեան էջերում ու գրեթէ բոլոր հեղինակների երկերի մէջ:

Ազգութեան դաղափարի էվոլիւցիայի մէջ գուցէ լաւագոյն եւ իմաստալի սահմանումն այն է, որ այդ դաղափարը կապում է տուեալ երկրի աշխատաւորական, կլիմայական, երկրաբանական ու պատմական պայմաններին: Շատերը դարմանում են, որ օրինակ, Զուիցերիայի բնակիչները այնքան նման են իրար ե՛ւ ֆիզիկով, ե՛ւ ներքին, բարոյական նկարագրով, հակառակ՝ որ տարբեր ծագումն եւ տարբեր լեզու ունին, մի կողմը ենթակայ Գերմանիայի քաղաքակրթական ազդեցութեան եւ միւսը՝ Ֆրանսայի: Կարծում եմ, սակայն, որ այստեղ ոչինչ կայ զարմանալի. ամէնքին էլ Ալպեան լեռների հոգին է ծնել, դաստիարակել, ներշնչումներ տուել, կեանքը կաղապարել, պարապմունքները ձեւակերպել եւ որոշ պատմութեան ճամբին դրել նրանց քաղաքական բախտը:

Զուիցերիացիք Ալպերի հոգին են կրում իրենց էութեան խորքերում:

Ստեպների անծայրածիր ու երազուն հոգին է իշխում ռուսական խառնուածքին, նրա ֆիզիկ ու բարոյական ամբողջ կազմուածքին: Ստեպը՝ հարթ ու անեղր, ու այս պատճառով քաշող ու խորհրդաւոր:

Ստեպը՝ որ ուրագաններ ունի վիշապի պէս, որոնք սլանում են անարգել սար ու ձորից, ժայռ ու բլրից թափուր հարթութիւններով եւ լիզում են յարկ, բնակութիւն ու արօտ:

Ստեպը՝ որ դեսեր ունի, պղտոր, լայնահոտ ու յօրանջուն, ինչպէս մարակի տակ հանդչող կեանքը. եղէգնուտներ ունի ծաւալուն ու զալար, որոնք գիշերները հեկեկում են խշրտուկով եւ ուր վայրի ձիերը սլանում են մրրկաշունչ երամակներով դայլերի վոհմակների երեսից: Եւ ուշ գիշերներին բորենիների